Դաւիթ Անյաղթի ուսմունքի մասին՝ յատկանիշների եւ յատկութիւնների առընչութեամբ

Ի. ՆԱՐՍԿԻ

Դաւիթ Անյաղթի չորս ստեղծագործութիւններից մէկը՝ «Վերլուծութիւն «Ներածութեանն» Պորփիւրի» աշխատութիւնը, մեծ չափով նուիրուած է իրերի յատկանիշների եւ յատկութիւնների հարցին՝ որպէս փիլիսոփայական խնդիր։ Եւ կարդալով այդ «Վերլուծութիւնը...» մենք ակամայ հիանում ենք նրա տեսութեան փիլիսոփայական մեծ կուլտուրայով, խնդրի մէջ ա՞յդ աստիճան թափանցելու խորութեամբ։

Փիլիսոփայելու բարձր կուլտուրայի դրոշմն է կրում արդէն Դաւիթ Անյաղթի դրաւած դիրքորոշումը, այստեղ անխուսափելիօրէն կրկին առաջ եկող հարցը լուծելիս՝ ի՞նչ առընչութեան մէջ են Պղատոնի եւ Արիստոտելի փիլիսոփայական հայեացքները։ Եւ հենց «Վերլուծութիւն «Ներածութեանն» Պորփիւրի» աշխատութեան մէջ Դաւթի նոր պղատոնական վարդապետականութիւնը ամենքից քիչ է արտայայտում, իսկ առաջին դիծ է ելնում անհամեմատ շատ աւելի բարձր եւ ծաւալուն մի հայեացակէտ, որի մասին խսկապէս կարելի է ասել, թէ՝ «իր ուսմունքի չտարբերակուած ընոյթի շնորհիւ Դաւիթը հայ փիլիսոփայութիւն ներմուծեց համապարփակ գիտութիւն, ամէն ինչ ընդգրկող համակարգ...»[1]։ *Տուեալ չտարբերակուա-*

---

1. Ս. Ս. Արեւշատեան, *Դաւիթ Անյաղթը եւ Նրա Դերը Հին Հայկական Փիլիսոփայութեան Զարգացման Գործում* (տես՝ Դաւիթ Անյաղթ, *Երկեր*, Մոսկուա, 1975, էջ 27) (ռուսերէն)։

ծութիւնը ամենեւին էլ հաւաքականութիւն չէ, եւ այդ հանգամանքը պարզորոշ դրսեւորւում է այն լուծումը ընութագրելիս, որը Դաւիթը տալիս է ունիվերսալիաների (ընդհանրականք) խնդրին։ Քննութեան առնենք այդ լուծումը։

«Վերլուծութիւն «Ներածութեանն» Պորփիւրի» ուսերորդ գլխում Դաւիթը սկզբում ելնում է պղատոնական հայեացքից այն մասին, որ որպէս ընդհանուր՝ սեռերը եւ տեսակները անմարմին են, այդ հայեացքը արտայայտելով այսպէս. «...Նրանք գոյութիւն ունեն (իրերի) բազմութիւնից առաջ, բազմութեան մէջ եւ բազմութիւնից յետոյ»[2]։ Այսպիսով ընդհանուրի գոյութիւնը ցոյց է տրւում ամենից առաջ սեռերի դաղափարներում, ապա ապագայ universalia directa-ի իմաստով, այսինքն՝ այդ դաղափարներին համամասնակից իրերի դասերում եւ, վերջապէս, իրերի մասին գոյութիւն ունեցող այն հասկացութիւններում, որ կազմաւորւում են մարդկային մտքերում։ Սա պղատոնական հայեացակէտ է, բայց Դաւիթը դա այնպէս է ներկայացնում, որ ա՛յն ձեւով համընկնում է չափաւոր իրապաշտութեան ըմբռնման հետ, որը տակաւին մի քանի դար անց կ՚արտայայտեն Իրն Սինան, ապա եւ՝ Թոմմա Աքուինացին։ Վերջին հանդամանքը եւս մի փաստարկ է այն բանի օդտին, որ տուեալ հայեացակէտը հակացուցուած չէ արիստոտելիզմին՝ պատմականօրէն ծնուած լինելով վերջինիս ձեւափոխութիւններից։ Սակայն այդ բոլոր ձեւափոխութիւններից դեռեւս շատ առաջ հե՛նց Դաւիթ Անյաղթը Արիստոտելի դոյաբանութիւնում ամենայն ճշդութեամբ ցոյց տուեց այն կէտը, որը մի հաստատուն «կամուրջ» է ունիվերսալիաների պղատոնական մեկնաբանութիւնից դէպի պերիպաթետիկական (ճեմական) մեկնութիւնը անցում կատարելու համար։

Դաւիթը Արիստոտելի բոլոր ձեւերի ձեւը մերձեցնում է եւ Պղատոնի դեմիուրգին (ստեղծագործող ոյժ հանդիսացող բարձրագոյն բանականութեան), եւ Օդոստինի ստեղծիչին։ Այս առումով կարելի է համաձայնել այն թեզին, թէ «Դաւիթը ձգտում է բթացնել այդ տարբերութեան (այսինքն արիստոտելիզմի եւ պղատոնիզմի տարբերութեան, Ի. Ն.) նշանակութիւնը»։

Գոյաբանական տուեալ շրջանակներում ջնջւում է նաեւ ընդհանուրի մեկնաբանութեան՝ Պորփիւրի եւ Արիստոտելի դիրքերի տարբերութիւնը։ Սա չի նշանակում, թէ Դաւիթը արհամարհում է այդպիսի տարբերութիւնը ...Դաւիթ Անյաղթի համար, սակայն, գոյաբանական հայեացակէտը շատ աւելի էական է, քան Պորփիւրի

---

2. Դաւիթ Անյաղթ, Երկեր, էջ 123 (ռուսերէն)։

համար, իսկ նիւթի եւ ձեւի նշուած յարաբերակցութիւնը Դաւիթը յատկապէս ընդգծում է։ Ընդհանրապէս, ինչպէս երեւում է, Դաւիթը լիովին իրաւացի եւ ստոյգ է վարուել, սկզբունքայնօրէն եւ իրաւասու է վարուել, երբ Պորփիւրի դրոյթները դիտել է որպէս ունիվերսալիաների խնդրի երկու լուծումների մի իւրօրինակ օրկանական համակարգ, այսինքն՝ որպէս ունիվերսալիաների Պղատոնի իրապաշտութեան եւ Արիստոտելի առանձնայատկօրէն սահմանափակուած իրապաշտութեան համակարգ։ Իսկ իր՝ Դաւիթ Անյաղթի համար, երբ նա հարց է տալիս, թէ արդեօք ընդհանուրը հանդիսանո՞ւմ է բնութեան ստեղծագործութիւն, թէ՝ մտքի ծնունդ է, ունիվերսիալիաների խնդիրը կարեւոր է թէ՛ իմացաբանական, թէ՛ գոյաբանական առումով, եւ դրա գոյաբանական տեսակէտին նա անդրադառնում է չափազանց նրբին ու մանրազնին։ Դա երեւում է նաեւ Արիստոֆանի եւ ստոյիկների քննադատութիւնում։

Դաւիթը ուշադրութիւն է դարձնում, որ որոշ դէպքերում տրամաբանական վերլուծութիւնում Պորփիւրը հետեւում է Արիստոտելին, իսկ այդ նոյն վերլուծութեան գոյաբանական մեկնաբանութիւնում՝ Պղատոնին։ Սակայն դա չի յուզում նրան, քանի որ գտնում է, թէ դա թոյլատրելի է՝ որովհետեւ տրամաբանական (մտային) եւ գոյաբանական (իրական) կապերի միջեւ լիակատար նոյնութիւն չի կարող գոյութիւն ունենալ։ Դաւիթ Անյաղթի գոյաբանական իրապաշտական մօտեցումը յատկանիշների եւ յատկութիւնների խնդրայարոյցին՝ նրան օգնեց բեղմնաւոր դիրք գրաւել սեռերի եւ տեսակների ծաւալի եւ բովանդակութեան յարաբերակցութեան հարցում (համապատասխանաբար՝ սեռի եւ տեսակի հասկացութիւնում)։ Այդ դիրքորոշումը նրա մօտ արտայայտուած է աւելի կտրուկ, քան Պորփիւրի եւ պերեպատետիկների (ճեմականների) մօտ։ Դաւիթը շեշտում է այն գաղափարը, որ տեսակը «աւելի հարուստ» է բովանդակութեամբ, քան սեռը, քանի որ «տեսակի մէջ առատօրէն հանդէս են գալիս տարբերիչ յատկանիշները, իսկ սեռի մէջ՝ երբեք, որովհետեւ սեռը, որպէս սեռ՝ լինելով անբաժանելի, չունի տարբերութիւններ»[3]։ Սակայն հնարաւորութեան մէջ, կարողական կերպով, բայց միայն կարողական կերպով, սեռը ունի բոլոր ստորադաս տարբերիչ յատկանիշները, իսկ երբ դրանք դրսեւորուում են, ո՛չ միայն իրականօրէն ծագում են տեսակներ, այլեւ ինքը սեռը վերածւում է ինչ որ այլ բանի, քան ինչ որ էր նախքան այդ դրսեւորումը[4]։

3· Նոյնը, էջ 164, 168։

4· Նոյնը, էջ 172։

Սեռի այդ զարգացումը տեղի է ունենում իրական տեսակներ յայտնելու շնորհիւ, իսկ դա նշանակում է, որ իրականում «տեսակները դերադասելի են սեռերից»[5]:

Դաւիթ Անյաղթի այդ դատողութիւնների ֆոնի վրայ... ուրուագծակերպում է ընդհանուրի եւ նուազ ընդհանուրի բովանդակալիութեան հարցում Լոքի եւ Հեկելի ապագայ ընդհարումը, մի բախում, որը, ի վերջոյ, որպէս խնդիր՝ հասաւ մարքսիստական ճանաչողաբանական մաքին, լուծում ստանալով, վերջապէս, Մարքսի «Կապիտալում»:

Դաւիթ Անյաղթի նշուած, ինչպէս նաեւ բազմաթիւ այլ դատողութիւններ՝ ունեն ստեղծագործական մեկնութեան բնոյթ: Դրանց թիկունքում զգացում են հեղինակի ամբողջական անձնաւորութիւնն ու անհատականութիւնը, եւ Լ. Վաստերնիկը ի զուր է ջանում դրանք տարալուծել Աղեքսանդրեան դպրոցի նորպղատոնիկների բազմադէմ եւ ոչ անհատականացուած ընդհանուր հունի մէջ[6]: Այս կապակցութեամբ իմ պարտքն եմ համարում նշել Արիստոտելի ստեղծագործութիւնների երկրորդ հատորում (Մոսկուա, 1978) նրա «Օրգանոն»՝ իմ եւ Պրոֆ. Ն. Ստեաժկինի կազմած համատեղ մեկնաբանութիւններում սպրդած (էջ 599) ձեւակերպման անորոշութիւնը: Դաւիթ Անյաղթ փիլիսոփայի արտասովոր անձն ու անհատականութիւնը, իրենց դրսեւորում են նրա բազմաթիւ դատողութիւնների ինքնուրոյնութիւնում, նոյնիսկ այնտեղ, որտեղ դրանց խնդիրն է, ըստ հեղինակի մտայղացման, ընդամէնը միայն ու միայն բացատրել ուրիշի ընդլիրը: Ինքնատիպ են, օրինակ, Դաւիթ Անյաղթի դատողութիւնները տարբերիչ յատկանիշի եւ այն մասին, որ այն օժտուած է ըստ քանակի եւ տարողութեան փոխուելու ընդունակութեամբ: Կամ պատահական յատկանիշների մասին, որոնց թւում Դաւիթ Անյաղթը առանձնացնում է իրականօրէն դիսլուծականը[7]:

Կարելի է համաձայնել այն մաքին, որ տարբեր՝ ընդհանուր, յատուկ եւ առաւել յատուկ յատկանիշների միջեւ գոյութիւն ունեցող յարաբերակցութիւնները մեկնաբանելիս մեզ համար այժմ առաւել արժէքաւոր է այն, որ Դաւիթը նշել է դրանց փոփոխութիւնները, «որոնք կախուած են իրերի միջեւ իրականում գոյութիւն ունեցող յարաբերակցութիւններից, կախուած են իրի եւ նրա որակական

---

5. Նոյնը, էջ 169:

6. **Pseudo-Elias (Pseudo-David), Lecturcs on Porphyry's Isagoge,** Introduction, text and indices by L. G. Westerink. Amsterdam, 1967, p. XV.

7. Տես՝ Դաւիթ Անյաղթ, Երկեր, էջ 158-160, 183-186 (ռուսերէն):

դրսեւորման կապից, հասկացութիւններում դրսեւորուող կապերի եւ յարաբերութիւնների համակարգից...»։ Հարցի հենց այդպիսի տեսական–ճանաչողատեսական լուծումը Դաւթին թելադրեց տարբերիչ յատկանիշի ուժեղացումը եւ թուլացումը դրանց բոլոր ձեւերում կախման մէջ դնել իրաւ իրերից՝ դրանց որակական յարաբերակցութիւններով հանդերձ...»։ Դա իրերի իրական դիալեկտիկային աւելի մօտ դիրքորոշում է, քան Պորփիւրի բնազանցական հայեցակէտը, որը ընդունում էր, թէ որոշ տարբերիչ յատկանիշներ ընդունակ են փոխելու իրենց քանակա–որակական տարողութիւնը, միաժամանակ համակարգօրէն, առանց որեւէ վերապահութեան մերժելով մի ամբողջական խումբ տարբերիչ յատկանիշների նմանօրինակ ընդունակութիւնը։

Դաւթի Անյաղթի տրամաբանական մանրակրկիտ մտածողութիւնը արդասաւոր դեր է խաղացել հայկական հին աշխարհիկ փիլիսոփայութեան զարգացման գործում։ Ունիվերսալիաների խնդիրը՝ նրա չափաւոր իրապաշտական լուծումը հնարաւորութիւն էր ստեղծում նոմինալիստական–մոտալդայական մեկնաբանութիւնների համար... Սակայն Դաւթի Անյաղթի նշանակութիւնը շատ աւելի ծաւալուն է, եւ մենք հիմք ունենք խօսելու համաշխարհային փիլիսոփայութեանը բերած նրա աւանդի մասին, որը, թերեւս առաւել ակնյայտ է ունիվերսալիաների հարցի բնագաւառում։

COMMENTS ON THE NATURE AND CERTAIN PECULIARITIES OF THE PHILOSOPHY OF DAVIT ANHAGHT

I. NARSGY

(Summary)

One of the four treatises of Davit, the «Commentary on the Isagoge of Porphyry» is devoted to the complex problem of the universals. Through his non-eclectic and original approach to the issue, Davit has in fact worked to bridge the gap between extreme Platonic idealism and moderate Aristotelian realism (and the Peripatetic schools). His views on the genus and the differentia, also the relationship between the categories and the actual world, have directly contributed to the development of Nominalism in Armenia.